



ԿՐՕՆԱԿԵՆ, ՊԵՏՐԵԿԵՆ, ԲԵՆԵՍԻՐԵԿԵՆ, ԵՒ ԲԵՐՈՅԵԿԵՆ.

ԹԻՒ Բ. — ՇՐՃԱՆ Ե. 1872 ՍԵՒ Դ. — ՓԵՏՐՎԱՐ 29.

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ՊՏՈՒՂ ՅԱՆԿԱԼԻ

ՈՐ Է

ՄԵԿԵՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԵՍ ՏԵՐ,

Հ Ա Ր Յ Ի Ն.

(ԵՐԿՐՈՐԴ ՏՈՒՆ.)

«Օարժանահաս մահարարժամ է զսոմանէ + ոմ հրամանի, բայց է մէջ բարեխօսոմ-նեամբ Լ աղբիւր + Արեւոյն Յակոբայ,» :

ՄԵԿԵՈՒԹԻՒՆ.

Ախտն մահարարժամ է ցաւ ինչ տարածական ի միոջէ առ բազումս, որպէս մեծն Վարդան ասէ ի մեկնութեան Սաղմոսաց. երես 20. «Օժանտախտն ասեն եթէ ի մարդ կամ յանասուն մերձենայ՝ փոխազրութեամբ յամենայն մերձաւորսն ձարակի, զի բնութիւն աստին է,» : Եւ Սարգիս Շ ՆորՏալէ զրէ Մեկ. Վաթղ. 365

երես. «Ոչ ժանտախտ է մեղքն նորա եթէ ի քեղ անցանէ,» : Եւ ի Գիրս Մոլոթեանց նմանեցուցանելով զմեղքն ասէ, երես 9. «Որպէս ժանտախտն՝ որ ի միոջէ տարածի առ միւսն,» : Եւ ի զիրս Լոթն Վարգենի ասի. երես 792. «Իբազմասպատկ պատճառաց մի է այն, զի մեղքն է չար ժանտախտական քան զամենայն, որպէս բորոտութիւնն է աստ տարափոխիկ յոյժ,» : Ըստ սմին և սուրբն Օգոստինոս զրէ. «Ի կղերիկոսէ որ յաղքատութենէ հարուստ և յանտոհմութենէ ազնուական է լեալ, փախիլ իբր ի ժանտախտէ,» և սուրբն Բարսեղ Հայրապետ ցուցանէ ընդ հանդերձս և ընդ այլ իրս աստիս գնալ յաշխարհ օտար, ի վերայ բանին թէ «յաթոս ժանտից ոչ նստաւ,» : ի Մեկ. Սաղ. զ. Ե. հմբ. 1: Թող զայլ և այլ արտաքին գրեանս յիմաստնոց շարագրեարան՝ ի վերայ այսորիկ խնդրոյ. Թող և զԵժըշկական զիրս արարեալ ի Հոպոկրատայ և ի Գալիանոսէ Եւկլինայ՝ այն է Լոպնիսի-

նայ, ի Աղգոսէ, որ Աղեանոս, և մանաւանդ ի Հիմերբէքիոսէ, ի Ռամուլիբոսէ, և յԱնդրինգոսնէ Անդրիացոյ, ի Հովմանոս Փրեղերիկոսէ, ի Բոյերհաւեայ, և յայլոց յորս զղանազան հնարան արարեալս ի վիլիսոփայից յառաջ ածեն, որք շուրջ զքաղաքաւ ասնն զապաւառս այրեցին կամ զփայտս, զի սրբեսցի օղն որ զնովաւ և մաքրեալ զտեսցի ի դարչահոտութենէ իւրմէ: Աւ Արուսնելիոս հաստատէ ի մեկ. Ալից Թ. 3. «Պարտ է ասէ ծխել զբեխկն (չաթլանդըճ), զծրդին (ՖրլՖրլուհի), զկաղամախ (կիւրէն), զկազնի (Ֆրնարի ծառ), զկնդրուկ, . վասն զի բնական պատճառ այսմ ախտի և տարածմանն դաղանի դարչահոտութիւնն է, որ յօդս մնայ ցըրեալ՝ ըստ Յախօբայ աստուածաբանի, և ըստ Արուսնելիոսի ի Մեկ. Ալից զԼ. Թ. 3. ասէ. «Օ ի ժանտամահն է թունաւոր իսկ գոլորշի՝ ի յօդն թանձրացեալ, կենդանական շնչոյն թշնամի, . որպէս և ոմն արուեստագէտ գրէ. «Մղնիքքն մարմնոց մերոց ասէ լուացմամբ և մաքրելով բանին, . ուստի յիմարութիւն մեծ է յայնպիսի վտանգաւոր ժամու և ժամանակի, յորում տիրեալ է մահտարաժամ կամ հարսանիթ, կամ ծաղիկ անուանեալն, զնալ և կամ տանել ի բաղանիս զմանկունս. զի սերմն ախտին ասէ տարածեալ գոլով յօդս՝ յընկալնույն զշունչս ձգեն միանգամայն յանձինս զհիմն ցաւոց, մանաւանդ տղայքն որ մաքուր են արեամբք՝ որոց առաւելապէս տիրէ, և մանաւանդ այնց, որք ի տիս պատանեկութեան և յերիտասարդութեան ժամանեալ հզօր և ջերմ են արեամբք: Աւ սուրբն Աերսէս Էնորհալի յերգս Ակեղեցոյ վկայելով

զդարչահոտութենէ ախտիս՝ ասէ. «Ժանտախտիք լցեալ ժահահոտ եղէ, . զի պատճառի ի ժահահոտութենէ նեխեալ լծից յաղբուսաց, ջրոց և սոյնպիսեաց ըստ Արուսնելիոսի է ի Մեկ. Ալից զԼ. Թ. 19. «Օ ի ժանտամահն ասէ ծնաւ ի յԱղիպտոս ի նեխել զեփոյն և ձկանց, . Աւ Բոյերհաւ գրէ, «Ի բնութեանց իսկ յայտանախ են ամենափուտ և օտարոտի ծծումբային հանգամանք, զի ամենայն այնպիսի վատահիւթ ցաւք զծագ իւրեանց ի փուտ գոլորշեաց, ի դիականց թաղելոց, և կարկաջահոտ ջուրց նեխելոց և յայլ դարչահոտ յաւելուած ախտից ընդունին, որ ըստ ակնարկմանն Աստուծոյ ի ձեռն հրեշտակաց դառնայ յայս ինչ կամ յայն ինչ ցաւ, որպէս ունիմք ասել զկնի սակաւութ, և սնեալ տարածի ժահահոտութեամբ. զի ըստ Արիստոտելի, «Արով գոյանայ, նովաւ սնանի, . Արով զմաքուր հզօր և զջերմ սըն արեամբ իբր պտուղ ահաս տարաժամ հնձէ ըստ Արուսնելիոսի ի մեկ. Ալից. Թ. 3. «Ախտ արիւնայինքն՝ ասէ՝ ժանտամահութեան արտադրին, ապա սպիտակ մաղձայինքն, յետոյ դեղին մաղձայինքն, հուսկ յետոյ սեւաւ մաղձայինքն, . վասն այսորիկ կոչեցաւ ըստ գործոյն մահտարաժամ. զի մահն գոլով կրկին՝ բնական և բռնական. և բնական կեանք մեր ըստ մարգարէին յեթանասուն ամս աւարտի. թէպէտ այս բան ըստնկարագրին հայի առ դարձն շրէից ի գերութենէն, որք ի լրանալ յեթանասուն ամի եթէ ոչ դարձցին ի շրէաստան, այլ յօժարութեամբ մնալ կամիցին՝ յեթանասուն ամին դարձցին. և որ ինչ աւելին քան զայն այսինքն քան զութսուն ամն, ցաւօք և հեծութեամբ

դարձցին. զի ոչ հնազանդեցան Աստուծոյ. և եթէ մինչև ցհարիւր ամն մնայցեն ի դերութեան ըստ կամաց իւրեանց, և մեռանիցին անդ, մեղաւոր և անիծեալ կոչեսցին ըստ միւս մարգարէին. այլ բան մարգարէին՝ ոչ ի մի միտս պարունակի, այլ ի զանազանս. որպէս և մեծն Ալարդան վասն ամաց կենաց մարդկան զբանս ևս մեկնէ. զի որպէս «Աոյիւ կարծեաց զկեանս մարդկան, սոյնպէս և Վաւթիւ յեօթանասուն կամ յութուն ամս բովանդակեաց. ասպա բովանդակեալն յայսքան ամն և վճարեալն ի կենցաղոյս՝ բնական մահուամբ ասի, և ոչ լրացելոցն՝ բրնական՝ կամ տարաժամ մահուամբ: Աւ զի սա, և սոյնպիսիք վասն մեղաց մերոց յակնարկութենէ Վարերարին հասանին առ մեզ, վասն այսորիկ ասաց «արժանահաս», այսինքն արժանապէս առ մեզ հասեալ. զի մարդս՝ որպէս ասացաք՝ զոլով եղծիչ սուրբ անուան նորա յինքենէ մեզօք, սուրբ առնէ Տէր զանուն իւր ի նոսա յայտ առնելով զգործս իւր յիւրաքանչիւրն, ոմանց ի բժշկութիւն հոգւոց, և ոմանց յառաւելն զատապարտութիւն՝ ըստ սրբոյն «Աերտէօի Ը նորհալոյ որ զրէ յՆդհանրականն յերես 219, ճշմարիտ բժշկին հոգւոց և մարմնոց Աստուած՝ հայեցեալ ի սիրտս մարդկան առ որս տեսանէ բարեաց ինչ մասն՝ արկանէ ի վերայ՝ ազքատութիւն կամ ցաւս, և կամ ասէ զերկուսեանն. զի զսակաւ բարւոյն սերմն ի բազում պողաբերութիւնն ածեցուցէ, իսկ յանբժշկելիս զոր ճանաչէ ի ցաւս մեղաց, ոչ ձեռնարկէ ի բժշկել, զի անդ առանց պատասխանւոյ երթիցեն. ասպա եթէ այսպէս և եթէ այնպէս, զոլով ար-

դար, արժանապէս հատուցանէ, ըստ երգոյն սուրբ մանկանցն Վաբելօնի, որք ազաղակէին ասելով, «Արդ՝ զամենայն զոր արարեր և զոր ինչ ածեր ի վերայ մեր արդար դատաստանաւ արարեր», . ուստի իրաւամբ ասաց «արժանահաս», . և կամի ասել, ո՞վ Տէր, որ արգարապէս դատողք ես ամենից, միանգամայն և բազում ողորմ առ արարածս, և զոչինչ չար ածես ի վերայ մեր ի տարապարտուց, այլ զամենայն վասն յանցանաց մերոյ խոստովանիմք, եթէ մահ, եթէ ազքատութիւնք, եթէ նեղութիւնք վիշաք և արհաւիրք մեծամեծք, և ի խրատ ուղղութեան, և ի յորդոր աստուածպաշտութեան. ուրեմն արգարապէս և իրաւամբք առնես զամենայն թէպէտ՝ բայց ոչ առանց սիրոյ՝ ըստ Աողոմօնի. «Չոր սիրէ Տէր՝ խրատէ. տանջէ զամենայն որդի՝ զոր ընդունի», : Ապա շնորհակալ լինելով զմարդասիրութենէդ՝ զոչեսցուք, արժանապէս են հասեալ ամենայն տանջանք այսոքիկ, ըստ անաչառ արդարութեան և ըստ բազում զթուութեան քո, ի ցասմանէ քում անփոփոխել բնութեանդ. ասպա յարէ ասելով, «Ի ցասմանէ քում հրամանի», :
 Աստուած՝ զոլով ջինջ և գերամբուր պարզութիւն, ի հոգեղէն և ի մարմնեղէն բազաղութիւնէ, անայլայլելի և անփոփոխելի է յինքեան, որպէս ասէ մարգարէն, «Աս Տէր և ոչ փոխիմ», . և պատճառ այսմ է զի կրկին իմն միայն կարէ փոխիլ կամ այլայլել, կամ կորուսանելով յայնց զոր ունի, և կամ ստանալով զայն զոր ոչ ունի. իսկ Աստուած զոլով էակ, ամենայն իրօք հարկաւոր, ոչ կարէ կորուսանել ինչ և կամ ստանալ, զի անսահման է յամեն

նայն սեռն կատարելութեան, անպարտեմն է անփոփոխ, և ոչ երբեմն ցասմանայ, և երբեմն զեջանի, արտմի կամ ուրախանայ, այլ որ ինչ է, նոյն է յամենայն ժամանակս որպէս ասաց Մովսէսի, «Աս եմ որ Անն», : Աւր զրէ մեկնինն : յԱբրայականն զրի չորս զրով փոխան բառիս «Տէր», Աօվա, որ և համարեալ է առ Աբրայեցիս անուն անվերածելի՝ անզիտելի և անքննելի, և այնչափ ահաւոր, մինչև ոչ ոք ի թարգմանչաց իշխեաց բացատրել, բայց եթէ ոչ հայեսցուք ի կէտն ասէ, մարթ է ընթեռնուել Աահուահ, կամ Աէհվեհ, որ տիրապէս ստուգարանի չորս տառիւքն՝ է, և, է, և, նոյնանայ ընդ նշանակութեան այնք զոր ասաց Աստուած առ Մովսէս՝ Աէհէհէհ ալէր ևհէհէհ, այսինքն Ամ որ եմ, կամ Աս եմ որ Անն, : Աւ այսպէս իմաստայս չորեքտառեան բառիս Ար Ան, որով նշանակի ինքնութիւն էութեան յանսահման կատարելութեանս, կամ ինքնազոյ էութիւն անբաւութեամբ կատարելութեան, և ի վերայ բանին, յԱէն, և Ար Ան, և որ դաշոյն է՝ ասէ Առննելիոս, Մեկ. Յայտ. զլ. Ա. 3. , պատասխանէ այն բանին Ալից. Գ. 13. Ամ որ եմ. և որ Անն առաքեաց զիս, , նշանակէ ասէ զկայուն յաւիտենականութիւնն, զոր ամենայն ասարբերութիւնս ժամանակաց պարունակէ, ներկայի, անցելոյ, և ազատելոյ. և է յատուկ անուանք Աստուծոյ, զոր իբր անհոյսովելի և աներեւոյթ, և անորոշելի եզ ինքեան Աստուած, այսինքն որ է, եղև, և եղիցի. զի Աբրայեցիք նշանակեն ազատնեալ զկայունութիւն իրին, և զմշտակայութիւն. և անունս Աէհհոյայ՝ է նոյն ընդ նմա որ ասի, որ է, կամ որ եմ : Բայց ա-

սէ՝ աստանօր դիտութեամբ ասէ Օգոստինոս. «Անփոփոխելի բնութիւնն ոչ ընդունի՝ եղև և եղիցի. եղև ի յանցելումն, է ի ներկայում՝ այլ միայն է, զի ինքն ճշմարտապէս է. զի որպէս է՝ գոլ ոչ կարէ, բայց ասէ՝ վասն փոփոխման ժամանակաց՝ յորս շրջի մեր մահականացութիւնն, ոչ ստաբար ասեմք ասէ, եղև. է և եղիցի, եղև ի յանցելում, է ի ներկայում, եղիցի ի յապառնութեան, այսինքն եղև՝ զի ոչ երբէք դադարեցաւ. եղիցի՝ զի ոչ երբէք պակասի. է զի միշտ է, ընդ ապառնեաց՝ իբրու ոչ էր՝ ծագիցի : Ասան այսորիկ ըստ յեղ յեղման ժամանակաց, մարդկային խօսողութիւնն այլայլի, որ ոչ երբէք պակասիլ կարաց կամ կարէ, կամ ժամանակն յեղ յեղել կարէ. ճշմարտապէս ասին իւրաքանչիւրոյ բանք ժամանակին, որովք երևի մշտակայուն լինելն Աստուծոյ յամենայն ժամանակս, ընդ որով և անփոփոխ զոյն նորա. որպէս և Առաքեալն զրէ. «յորում ոչ փոփոխումն և ոչ շրջելոյ ստուեր», : Յակ. Ա. 17 : Աւայն ամենայն զորս ասէ Մուրբ Գիրն զԱստուծոյ՝ ստրջանալ, բարկանալ, ցաւիլ, ըստ մեզ զեջեալ խօսի. զի ի վերայ բանին՝ «Ստրջացայ՝ զի արարի զմարդն»,՝ մեծն Աւարդան ասէ ի Մեկ. Նոննդ. Օ. ստրջացաւ արամեցաւ ասէ, կամ զղջացաւ, որ օտար են երկոքեանն յԱստուծոյ. զի ոչ է ակտ յամեներջանիկն Աստուած. քանզի երկոքինն յեանք են, և յապաշաւանաց լինի ի մեզ արամութիւն և զեղջ, որ չգիտեաք զլինելոցն. իսկ Աստուած հաւասարապէս սեասնէ զլեալն և զլինելոցն. այլ զեջանելով ըստ մեզ՝ վարի մերաբար, ցոյցս տալով զղջման և արամութեան, զի մեք արամեացուք և զղջացուք ի վերայ մեղաց մերոց եր-

կուցեալք զուցէ արամեսցի Մատուած և զղջածցի ընդ բարի առնելն մեր, զի արար զմեզ իշխան անթանիցն կրկին՝ քան զորս վատթար գտարք. և Վիրիս Ամանութեանց ստի՝ Վիրք Օ. զԼ. ԻԲ. Բարկանալ ասի զՄատուածոյ վասն ատերոյ զչարութիւն, և վասն վրէժխնդիր լինելոյ, նաև ննջել և մոռանալ ասի, սսկս մոռացմանց անիրաւութեանց. ուրեմն մինչ կերպիւ բորով լցուցանէ, զկարօտութիւնս մեր բարեբարութեամբն իւրով, ասի ունիլ ըստ կերպի մարդոյ զանազան անգամս և զկիրս: Աւ այլ բաղում ուրեք: Մպա ուրեմն և սուրբ այրս ըստ մեզ խօսելով երգեաց «ի ցասմանէ,, . ցասումն Մատուծոյ ոչ է իբրև զմերս, այլ այնպէս ցասմանայ՝ որ ոչ ջերմանայ, և ոչ փոխէ զսորհուրդն, բայց այնպէս գործէ, զորօրինակ ցասմացողք և ցաւողք զործեն, այսինքն եղծէ զգործս իւր՝ յորժամ անհաճոյ են նմա. զի ի վերայ բանին Մաղաքեայ «Աս եմ և ոչ փոխիմ,» ասէ Կուռնելիոս, «Օ որ ինչ ըստ պառնացայ՝ առնեմ, զի հաստատ է բանն իմ. առից վրէժխնդրութիւն իմ, զի ես ոչ եմ անկայուն անհաստատ, զի երբեմն զսոս և երբեմն զայն կամիցիմ, զի զուք կարծէք թէ փոխեալ եմ զընութիւնս իմ, զի ոչ պատժեմ զչարս. մի՛ այնպէս, զի Աս նոյն եմ, որպէս յառաջագոյն ի դարս հարց ձերոց, և յախտենից. ըստ այսմ ասէ «ի ցասմանէ,, . Մեկ. Մաղք. Վ. 6: Աւ զի ցասումն ի հրամանաց կամացն յառաջանայ և ի կիր առնանի, յարէ և ասէ «քում հրամանի,, : Մատուած՝ զորով էութեամբ զերածայրեալ բարի՝ ոչ ճանաչէ զչարս և ոչ զմեղսն, բայց եթէ այլով տեսակաւ. զի ճանաչումն կրկին ասի՝

յատուկ տեսակաւ, այլով տեսակաւ: Մատ առաջին կերպին ճանաչէ Մատուած զբարին այսինքն էութեամբ իւրով: Աւ ըստ կրկրորդին այլով տեսակաւ. զի զորօրինակ ճանաչեմք զոյսն՝ ըստ որում է, բայց խաւարն ոչ ճանաչեմք, եթէ ոչ բարձմամբ լուսոյն: Այնպէս ըստ աստուածաբանից ճանաչէ Մատուած զբարին, յատուկ էութեամբ իւրով. իսկ զչարն իբր կրկնակի միջոցաւ. քանզի էութեամբ իւրով ճանաչէ զուսակութիւն զհակակացն չարին, և միջնորդութեամբ այնր ունակութեան որ է ի Մատուած, ճանաչէ զպակասութիւն բարւոյն. վասն այսորիկ ասէ Վաւիթ. Մաղ. «Օ բարձունս ի հեռաստանէ ճանաչէ,, այսինքն զչարս. և ըստ այսմ տեսանելով զչարութիւն մարդկան՝ նշանակամաց կամի այսինքն թոյլտութեամբ հրամայէ հասանիլ չարեաց առ մարդս, զչարեաց պատժոց ասեմ, և ոչ զմեղաց, ըստ այնմ. Ասայ. ԻԱ. 7. «Աս եմ որ առնեմ զխաղաղութիւն և հաստատեմ զչարս այսինքն զչարիս պատժոց՝ և ոչ մեղաց: Մատ այնմ. Մաղ. «Աչ թէ զու Մատուած կամիս զանօրէնութիւն. և ոչ բնակին առքեղ չարք,, : Աւ այն մեզ յորդոր ուղղութեան, և ի խրատ աստուած պաշտութեան, ուստի ասաց «քում հրամանի,, : Հրաման Արարչին կատարելագործի ի ձեռքն հրեշտակաց, որովք ասաքին չարիք պատժոց սու չարս, և բարիք առ բարիս: Մատ այնմ «Օրհնեցէք զնա ամենայն պաշտօնեայք նորա, և արարողք կամաց նորա,, . և թէ «օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա, հզոր զորութեամբ ոյք առնէք զբան նորա ի լսել ձայնի պատգամաց նորա,, : Վարձեալ. «Վարքեայ սան-

ջանս ի ձեռն հրեշտակի չարի, : Իսկ Սո-
 զոմօն գրէ՝ Առակ. ԺԷ. 11. «զհակաւա-
 կութիւնս յարուցանէ ամենայն չարա-
 կամ. իսկ Տէր՝ հրեշտակ անողորմ արձա-
 կէ ի վերայ նորա, , ուր ասէ սուրբն՝ Աեր-
 սէս Աւարբօնացի Մեկ. Առակ. զԼ. ԺԷ. 11.
 11. «Աւ զինչ ի հրեշտակս է գտանել, ,
 ողորմած և անողորմ, կամ չար և բարի,
 , ըստ ասելոյն ի Սաղ. «առաքեաց ի նոսա
 ամնջանս . . . ի ձեռն հրեշտակի չարի,
 , ոչ թէ զընութիւնս նոցա կոչէ այսպէս,
 այլ սպասաւորութիւնսն, արդ քանի
 զի Աստուած սիրոյ է և խաղաղութեան,
 որ այսմ ներհակ լինի, պատուհասէ զնա
 Աստուած՝ կամ ի մարմնոյ ամնջանս դառ-
 նութեան ի ձեռն հրեշտակաց սպասաւոր-
 ութեան, և կամ ի հոգւոյ. ըստ որում
 ցուցանէ ի յԱւետարանին զոոցս սպասա-
 ւորութիւնն ի ամնջանս չարեացն: Աւ
 գարձեալ ասէ Սողոմօն յԻմաստութեան
 զԼ. ԺԷ. 16. «Սուսեր պողովատիկ զա-
 նաջառ հրամանդ քո բերեալ, և ի մէջ
 անցեալ զամենեանս ընոյր մահուամբ.
 անդ՝ առ երկինք քերէր, և այսր երկիր
 հասանէր, , զորմ, ասէ սուրբն՝ Աերսէս
 Աւարբ, «Հրեշտակն որպէս զերագ սուր
 էառ ի քէն զհրաման սպտակելոյն, և բազ-
 մացոյց զպիտիւնս. հրեշտակն զեմանալի
 սուրն երկիր քերեալ պայծառ աննէր, և
 յերկիր ձգեալ զմահսն գործէր, , Մեկ.
 Մատ. անդ: Ըստ այնմ ետես Վաւիթ
 սուր ի ձեռնին կոտորող հրեշտակին այ-
 սինքն զորութիւն հրամանի Տեառն, որովք
 յայանապէս տեսանի թէ Աստուած ի ձե-
 ոքն բարի հրեշտակաց առաքէ զբարիս և
 զչարիս յաշխարհ. վասն որոյ և երանելի
 Հայրապետս յառաջին ամն յիշեաց զվե-

րին զօրսն՝ զհրեշտակս, իսկ աստ զհրա-
 ման բառս: Յայտ աննէ թէ ի ձեռն նոցա
 կատարի նոյն հրամանն: Ասիցէ թէ հրա-
 ման Տեառն է, զի՞ ապա ոմանք խոյս տան
 յերեսաց ցաւոց. մի՞թէ Աստուած լիբանց
 է, և ոչ Աստուած դաշտաց. և Վաւիթ
 ասէ, «Յո՞ երթայց ես ի հոգւոյ քումմի,
 կամ յերեսաց քոց ես յո՞ վախեայց, ,

(Շ-բ-ն-ի-է-է):

Գ Ա Ս Ա Ս Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Կ Բ Օ Ն Ի .

(Շ-բ-ն-ի-բ-է-է-է):

Արօնի ուսման կամ կրօնական դաստի-
 արակութեան աւելի զիւրութիւնից կամ
 դժուարութիւնից չէ կարելի միանգամայն
 մանկավարժօրէն գերազանցութիւն տալ
 այս կամ այն դասանութեանը. հաւատոյ
 դաւանութիւնը բղնում է ճշմարտութեան
 մէջ ունեցած համոզմունքից, որը դաս-
 տիարակը պարտաւոր է տարածել ջնայե-
 լով նորա մեծ կամ փոքր դժուարութեա-
 նը, որ պէտք է կրէ ինքը այդ մասին: Ինչ-
 պէս ևս եղած լինէր դաւանութիւնը, ծը-
 նողք ցանկանում են, որ մանկուկը ու-
 սանին իւրեանց դաւանութիւնը, որոյ մա-
 տին մանկավարժութեան պարտքն է ցու-
 ցանել ամենալաւ եզանակը, որով կարող
 լինի իւրաքանչիւր դաւանութիւն իւրա-
 ցուցանել զիտակցական ընդունակու-
 թեամբ, հիմնաւորուած լինիլ զըացմանց
 վերայ և արդիւնաւորուած գործով. մի
 խօսքով, որ կարող լինի բանականութիւնը
 կրթութիւն պողաւէտ և կենդանի հաւատոյ
 ուղղութեամբ: Մենք չենք կարող այս